

Օտեան չէր բաւականանար միայն ուսումնասիրելով: Ինք ալ իր կարգին կը սիրէր ուսումնասիրութիւններ հեղինակելը: Նոյնիսկ իր առաջին երկերը կենսագրական ուսումնասիրութիւններ եղան:

Իր գլխաւոր ուսումնասիրութիւններն են. —

1. Նահապետ Ռուսինեան (Մասիս)
2. Ծերենց (Մասիս)
3. Ֆիդէլքա Պօղոս Պատուելի (Մասիս)
4. Գրիգոր Օտեան (Մասիս)
5. Ս. Ժողովներըը (Հայրենիք)
6. Հին Խնդիրներ (Հայրենիք)
7. Իշխանաց Կղզիները (Արեւելք)
8. Կղէտպատրա (Արեւելք)
9. Թէոտորոս (Արեւելք)
10. Փարսիները (Ազատ Բեմ)
11. Ժողովուրդ (Շիրակ)
12. Պօղոս Նուպար (1913)
13. Հայկական խնդիրը (1914)

Այս վերջինը տպուեցաւ, բայց լոյս չտեսաւ: Պատերազմը վրայ հասած էր, եւ հրատարակիչները չհամարձակեցան զայն հրատարակ հանել: «Պօղոս Նուպար»ը համառօտութիւնն էր այդ դորձին: Հրատարակիչը, Ստեփան Բիւրքճեան, աքսորին մէջ եղերական մահով զաւեց իր մեղքը:

ԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

— Թարգմանութիւններու մէջ բծախնդիր չեմ եղած, — յայտնեց Օտեան: Թարգմանած եմ լաւն ալ, գէշն ալ, յաճախ փոխարէն ստացուած վարձատրութեանը համար:

Ահա իր Թարգմանութեանց ցանկը. —

1. «Արգասաւորութիւն», Զօլայի, (1910)
2. «Յարութիւն», Թօլսթօի,
3. «Աննա Քարենինա», Թօլսթօի, (1911)
4. «Նիք Քարթըր»ներու շարք մը
5. «Նաթ Փինքէրթօն»ներու շարք մը
6. Տաստայէվսքիի «Մեռեալներու Տունը», (Հայրենիք)
7. Տաստայէվսքիի «Քրօթքայան»
8. Ալեքս. Տիւմայի «Անժ Բիթու»ն (Հայրենիք)
9. Փօլ Պուրտէի «Տավիտ»ը (Արեւելք)
10. «Յովհաննէս Զմշկիկ» Կիւսթապ Շլումպէրտէի (1914)

Այս ցանկին կազմութենէն յետոյ էր, որ «Արեւ»ի մէջ Թարգմանեց Իշխանն ու Աղբաւը, Սուտին Իշխանութիւնը, եւ Յակոբայ Ջրհորը: **ՅԻՇԱՏԱԿՆԵՐ**

Յիշատակներ գրելու դէմ էր Օտեան, եւ սակայն... գրեց: Բայց իր յիշատակները, իր անձին շուրջ չէին գառնար աւելի, այլ իր անձը պատրուակ մը կ'ընէին ժամանակակից դէմքեր ու դէպքեր նկարելու համար: Ու բոլորն ալ կը կարգացունէին համով մը, գրեթէ վէպի մը պէս:

Հինգ սեռի են անոնք. —

1. Տասներկու տարի Պոլսէն դուրս (Ժամանակ):
  2. Արիւնտ յիշատակներ (Նոր Կեանք):
  3. Անիճեալ Տարիներ (Ժամանակ)
  4. Մանկութեան Յիշատակներ (Իգնատ Աղա):
  5. Գրական Յիշատակներ (Ոստան):
- Առաջին երեքը հատորով ալ տպուած են:

ԻՐ ԹԵՐԹԵՐԸ

Առանց թուելու իր մշտական աշխատակցութիւնները՝ Օտեան հրատարակեց նաեւ աւելի քան տասնեակ մը թերթեր, ոմանք մեն մինակը, ուրիշներ աշխատակցութեամբ, ինչպէս Արամ Անտոնեանի, Բարսեղ Շահապղի, եւ ուրիշներու հետ: Ահա անոնց մէկ չոր ցանկը. —

1. Վառարան (1885, ձեռագիր, Պէրպլերեան վարժ.ի մէջ)
2. Անհաշտ (1885, ձեռագիր, Պէրպլերեանի մէջ)
3. Ազատ Բեմ (1903-1907, շաբաթաթեր, Աղեքսանդրիա)
4. Ազատ Խօսք (1901-1902, Փարիզ եւ 1906-1907, Աղեքսանդրիա)
5. Թերթիկ (1906, օրաթերթ, 28 թիւ, Աղեքսանդրիա)
6. Օրէնք (1905, շաբաթաթերթ, 13 թիւ, Աղեքսանդրիա)
7. Կրակ (1906, շաբաթաթերթ, 3 թիւ, Աղեքսանդրիա)
8. Միութիւն (1896, Աթէնք)
9. Սեւ Կառու (1912-1913, շաբաթաթերթ, 7 թիւ, Պոլիս)